

վէճերը արծարծուեցան նաև Գուգարքի մէջ, որ Վրաստանի կը պատկանէր: Այս մասին կը պատմէ Narratio:

«Եւ եղև ժողով մեծ ի Կոստանդնուպոլիս ընդդէմ հերետիկոսաց ոմանց, զոր կոչեմք Հինգերորդ ժողով (573°): Եւ զի միաբանեցան (Հայք) ընդ նոսա, կոչեցին զսուրբ զրուես Սրբոյն Սոփիայ կից յանուն նոցա, որ եւ մինչև ցայսօր անուանեալ կոչի Գուգար Հայոց: Յայնժամ ուրեմն նոյնքն զՈրովիչնէս, զԵւագրիոս, զԻրիլիոս, զՆեստորեանս, զՅակոբիկեանս, զՅուլիանեանս, զԳայիանեանս եւ առ հասարակ զամենեւեան, որք միանգամ զՆեստորի հերձուածն յանձինս բարձեալ բերէին: Իբրև զարձան նոքա յաշխարհն Հայոց՝ ոմանք մտադիւր յօժարութեամբ ընկարան զմիարանութիւնն. իսկ այլք ընդդէմ զարձան, յաւուրս Յովհաննու կաթողիկոսի. զորոց չէ այժմ խօսել մի ըստ միով: Արդ զբեցին (սոքա) թուղթ առ Արա: կաթողիկոսն Աղուանից աշխարհին պէս զայս ձև օրինակի. Եկ, միարանեաց ընդ մեզ ի հաւատս. առա՛ զմի բնութիւն Քրիստոսի Աստուծոյ եւ (յաւել) ի Սուրբ Աստուած անդր զՈր ինչեացր վասն մեր: Այլ նա չա՛ն յանձն եւ անդրէն պատասխանի արար. Պետրոս եւ Գրիգորիոս, որք յառաջ քան զիսն կացին, այսպէս ասէին. Ե՛ւ ես ոչինչ յաւելից ի վերայ եւ ոչ բարձից ինչ ի բաց: Գրեցին զնոյն օրինակ եւ առ Վիրս (եւ առ Սիւնիս). սակայն եւ նոքա յաճախագոյնս ընդդէմ բարբառեալ չառին յանձն. բայց միայն Ուտիք, այս ինքն դաւառքն (կոչեցեալք) ըստ բարբառոյն Հայոց՝ Տաշիրք, Չորափոր եւ Գարդմանք, եւ ոմանք յԱրձախայ (հաճեալ հաւանեցան): Յաւուրս յայնտիկ պէսպէս յուզուեալ լինիէն ի պատճառս սպասամբութեան նախարարաց ընդ բազում աւուրս, եթէ ի Հոռոմէական (բաժնին Հայոց) եւ եթէ ի Պարսկականին. յոյդք եւ ինդիք զհաւատոց, յաւուրս Կաթողիկոսացն Յովհաննու եւ Մովսիսի. եւ յերկարեալ ձգէին մինչև յառաջին ամն Սոսրովու որ թաղաւորեաց ի ձեռն Մարկայ կայսեր՝ մեծաւ զօրու Հոռոմոց» (Garitte, La narratio, § 89 եւ էջ 216—219. հմմտ. ՀԱ. 1953, էջ 470):

Սոսրով Բ. գահ բարձրացաւ 591ին: Նոյն տարւոյն կնքուեցաւ խաղաղութեան դաշինքը Պարսից եւ Հոռոմացեաց մէջ: Ինչպէս կ'երեւայ Աղուանից աշխարհը մեկուսի մնաց քսա-

նամեայ պատերազմներէն. բայց մասնակցեցաւ Վահրամ Միհրեանդակ Չորինի ապըստամբութեան:

Արաս վախճանեցաւ 595ին: Աթուրն վրայ յաջորդ ունեցաւ Վիրոյ կաթողիկոսը: (Շարունակելի:)

ՅՈՒՑԱԿ ԹԵ ՀՐԱՆԻ ՀՆՅԵՐԸՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ

(Շարունակելի:)

7.

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

ԹՈՒՂԹՔ՝ 176: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 22.5 × 16.5: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 17 × 11: — ԹԵՐԹՔ՝ չեմ նշանակուած: — ՏՈՂՔ՝ 20: — ՆԻԻԹ՝ Մագաղաթ, բխագոյն: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ վերջէն քերի բաւական լաւ, սեւցած քիչ մը եւ նմանապէս քղեր կազմէն անշատուած: — ԿԱԶՄ՝ տախտակ, վրան կաշի քաշուած, զծագարդերով: — ՄԱԳԱՂԱՅ ՊԱՀՊԱՆՆԱԿ՝ չկայ: Փակամբերը կանուած: — ԳԻՐ՝ բարդ գիր. յստակ գեղեցիկ, զանազան գոյներով: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր, երբեմն գոյնզգոյն, նաեւ ուկիով: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ քոչնագիր, սիրուն երփնեբանգ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ շատ, ստեղծ պարզ, բայց եւ գունակ գունակ: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ քղ. 28ա, 49բ, 73բ, 94ա, 118, 140ա. գոյնզգոյն ոսկեխառն, լաւ, քղ. 162ա—բ. կտրուած: — ԽՈՐԱՆՔ՝ քղ. 11ա. խորանին մէջ Յիսուս, Պետրոս եւ Պողոս առաքեալները. իսկ յուսանցիմ վրայ՝ Գաւիթ եւ քղ. 140ա. «Եւ Մանուէլ» (գրո՞ղը քէ գծո՞ղը): — ԳԱՏԱՐԿ՝ չունի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԾԳԷՆ (1705) առաջ: — ԳՐԻԶ՝ անձագր (Մանուէլ): — ՏԵՂԻ՝ անձագր: ՍՏԱՅՈՂ՝ անձագր: — ԿԱԶՄՈՂ՝ Յովհաննէս երէց: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 10բ, 73ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Սեպիակամութիւն քեհեղանարմակ Վարժապետեան ընտանիքի (1949):

Մատենան է՝ Սաղմոսարան:

Թղ. 1ա. «Երանելոյն Եպիփանու կալիկոպոսի Կիպրացոյ յաղագս երգոց Սաղմոսարանին: Զամենայն ինչ զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա ի հոգեկիր ծերոյն, բաւական համարեցաք պատմել փոքր ի շատէ»:

Թղ. 2ա. Եպիփանու Կիպրացոյ յաղագս սաղմոսաց Դաւթի: Արդ առեալ ասէ Սամուէլ զարուակ իւզոյն եւ աւծ գԴաւթի թաղաւոր կատարմամբ եւ խաղաց ի վերայ նորա Հոգի Տեառն յարէն յայնմանէ:

Թղ. 11ա. Գիրք Սաղմոսաց Դաւթի. Սաղմոս ի Դաւթի. Երանեալ է այր, որ ոչ

զնայ ի խորհուրդս ամբարշտաց, ի ճանապարհի մեղանորացն ոչ եկաց եւ յաթոսս ժանտից ոչ նստաւ:

Յիշատակագրութիւններն են. Թղ. 10բ. «Վերասին կազմոցս զեղկելի զերիս զՅովհաննէս երէցս յիշէք ի Քրիստոս եւ Աստուած սոյորմի ասէք զերոյս որ կապեց զքնարս Դաւթի ի թվին ՌՃԾԳԷՆ ի քաղաքն Կեսարիա ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սարգսին եւ յիշողացդ Աստուած մեղաց թողութեան տացէ. ամէն: Հայր մեր որ յերկինս ես»:

Թղ. 73ա. Տրդատ Վրդ. Պալեան առաջնորդ Կեսարիայի եւ վանահայր Ս. Կարապետի թաղացի եւ միաբան Ս. Յակոբայ (Երուսաղէմ) կը մաղթէ զինքը յիշել:

8.

Ք Ա Ր Ո Ձ Գ Ի Ր Ք

ԹՈՒՂԹՔ՝ 74: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 20 × 15: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկախ: — ՏՈՂՔ՝ 35: — ՆԻԻԹ՝ բուրդ դեղնագոյն: — ԿԱԶՄ՝ խաւաքար, վրան մագաղաթեայ քուրք մը փակցուած: — ՄԱԳԱՂԱՅ ՊԱՀՊԱՆՆԱԿ՝ հմմտ. վերք, երկաքաղիք Աւետարանի մը կատարածներ: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ երբեմն սեղ ձգուած է գրեյու կամար եւ երբեմն գրուած կարգ բաներ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ, սակայն առջեւն ու ետեւը պակաս, բայց ձեռագիրը միացուած կամ բուրդ դրուած եւ ուրիշ բաներ գրուած հմմտ. վարք: — ԳԻՐ՝ բարդ գիր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ, ԿԻՍԱՆՈՐԱՆՔ եւ ԽՈՐԱՆՔ՝ պարզ բաներ եւ սակաւ: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 33ա—բ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԱ (1652): — ԳՐԻԶ՝ Պետրոս: — ՏԵՂԻ՝ անձագր: — ՍՏԱՅՈՂ՝ անյայտ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 52ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ կը գտնուի Թեհեղան, Վարժապետեան ընտանիքի մօտ:

Մատենան է՝ Քարագիրք: Սկիզբը եւ կարեւոր մաս մը պակաս, սակայն առջեւը կան ուրիշ կտորները, ինչպէս եւ վերջը (հմմտ. վարք):

Թղ. 14ա. «Քարոզ վեցերորդ կիրակէին, վասն մահու եւ կատարածի յաշխարհի, ի բանն Արթուր կացէք զի ոչ զիտէք յորում ժամու տէր տանն գայցէ, յերկօրեա, եթէ ի մէջ զիշերի, եթէ ի հաւախօսի: Նախախնամութիւն Աստուծոյ եւ բարերարութիւն յամենայն ժամ յայտնի է առ իւր արարածս որպէս հայր սիրէ զորդի եւ հանապաղ խրատէ զնա եւ աչք եւ միտք ի վերայ նորա է»:

Թղ. 17բ. «Քարոզ ի բանն սուրբ Աւետարանին որ ասէ թէ Եղբուք խորագէտք իրբեւ զօձ... նախ զիտելի է զի որպէս մարդս մարմին եւ հոգի է, նոյնպէս սուրբ զրոց բանն հոգեւոր է եւ մարմնաւոր:

Թղ. 21բ. «Քարոզ ի բանն մարգարէին որ ասէ...: Զի իցեալ է զականջս իւր, զի մի լուիցէ նա զձայն թովչի... (թէ վասն զի՞նչ) պատճառի մարգարէն խօսի զի առ իւր բանն խորին է եւ ծածուկ վասն զի առակաւ խօսի որ իմաստնոց եւ արժանաւորացն յայտնի լինի»:

Թղ. 23բ. «Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. Որ զանձն ի գործս իւր ոչ բժշկէ. եղբայր է նա այնոցիկ որ զանձինն առնիցէ. Անձն զրնական հոգին ասէ»:

Թղ. 28ա. «Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. Մահ եւ կեանք ի ձեռն լեզուի է եւ որք ըմբռնեն զնա կերիցեն պտուղ նորա: Առաջին խրատ վասն մարմնաւոր կենացն է, ճշմարիտ մահու եւ կենաց...»:

(Անդ թղ. 32բ). «Որպէս զրեալ է. ի յերկիրն Քաջբերունի է վանք մի որ կոչի Մեծոփ եւ մօտ ի վանքն զիւր մի փոքր եւ այր մի վայ կանչէր ի զերեզմանէն ի դուրս ի. տարի եւ վարդապետ մի սուրբ անունն Միսիքաբ եկեալ ի զիշերի, երաց զգերեզմանն խաչակնքեաց զնա եւ յարոյց զնա եւ հարցոյց զնա թէ ընդէ՞ր ոչ հանդչիս եւ նա ասաց թէ զան յիշոց տուեալ էի...»:

Թղ. 34ա. «Նորին զարձեալ վասն Յովհաննու ի բանն Մաղաքեայ, Առաքեցից զհրեշտակ իմ առաջի քս եւ պատրաստեցէ զճանապարհս քո: Բացից զբերանս մտաց եւ ասեց զհոգի շնորհաց...»:

Թղ. 37ա. «Նորին զարձեալ երրորդ քարոզ վասն Յովհաննու եւ գլխատմանն, ասէ Զայն բարբառոյ յանապատի պատրաստ արարէք: Ի բանս այս չորս իրս տեսանելի է առաջինն՝ որ ասէ. Ես ձայն երկրորդ բարբառոյ...»:

Թղ. 41ա. «Նորին զարձեալ ի նոյն խորհուրդ ի բանն որ ասէ. Պատուական է առաջի Տեառն մահ. վարդապետք ասեն թէ մահ նախ»:

Թղ. 43. «Նորին զարձեալ քարոզ վասն մահուն: Իսկ թէ ի կրօնաւորացն իցէ ննջեցեալն նոյնպէս պարտ է զի բերցեն յեկեղեցին...»:

Թղ. 46ր. Սողոմոնի լաւ է օր մահուան քան զօր ծննդեան եւ այս քարոզ է վասն մխիթարութեան. Այսպէս է բնաւորեալ առ հասարակ մարդկան իմացունն եւ կամք...»:

Թղ. 48ա. «Նորին քարոզ Շարաթի օր բարեկենդանին վասն շարժման երկնից ի բանն որ ասէ, երբեք շարժի երկիր եւ չորրորդին ոչ հանդարտի: Արարիչն Աստուած բոլորից հաստատեաց զաշխարհս»:

(Թղ. 52ա. այս քարոզին վերջաւորութեանը կայ՝ «Որում փառք եւ երկրպագութիւն...: Չմեղօք մեռեալ զծողս զՊետրոս երէցս ախմար յիշեալիք, ով հայրք եւ եղբայրք ամէն»:)

Թն. Այս քարոզներուն առջեւն ու ետեւը տարրեր գրեւորվ եւ ձեւերով (միասին եւ երկխման) կան դանազան կտորներ: Թղ. 1ա. «Ահա չափով իրեր մտեղէ»: Թղ. 2ա. (սկիզբը թերի) «Եւ այսպէս պարտ է յայտնել քահանային: Եւ այսպէս վասն ա. պատճառի»: Թղ. 6ր. «Վասն աղաւթից քարոզ ի բան առաքելոյ յառաջին Տիմոթ. Այսչեմ զձեզ նախ քան զամենայն ինչ աղօթս...: Նախ գիտելի է զի երեք են տեսակք բարի գործոց, այսինքն, աղաւթքն եւ ողորմութիւն»: Թղ. 13ր. (Կը մնայ թերի). Թղ. 53ա. (Սկիզբը պակաս). «Սորհեցան միաբանութեամբ, զեւք հակառակ են ամենեւին Աստուծոյ եւ մարդկան եւ իրերաց, յայլ ի կորուստ մեր միաբանին»: Թղ. 63ա. (Սկիզբը չկայ). «ՅԱզմայ ի ջրհեղեղն ամբ ՍՄԽԲ. ի ջրհեղեղէն մինչեւ յաշտարակն ՇԻՆ»: Ապա՝ փոքրիկ կտորներ եւ կրօնական պատմութիւններ, յետոյ՝ Թղ. 71ա—74ա. «Բարեկց ասէ... Գրիգոր ասէ...»: Թղ. 74ա. «Արարչագործ, խնամող, դասիչ...»: Վերջ:

Յիշատակագրութիւնք. Հմմտ. վերը. բաց աստի Թղ. 2ա. մատիտով կայ՝ «Նրանի թէ պակաս չլինէր այս գիրքը զի... աշխատութիւն մըն է: Ներսէս Վ. Դանիէլեան»: Ապա նոյն էջին վարի լուսանցքին վրայ, դարձեալ մատիտով «ՌՃԱ. թվին»:

9.

Հ Ա Ի Ա Ք Ա Յ Ո Յ

ԹՈՒՂԹԻՒՆ՝ 214: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 22 X 17: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 17 X 6 + 6 = 12: — ՏՈՂՔ՝ 32: — ԹԵՐԹԻՒՆ՝ 14 նշանակուած: — ՆԻԻԹ՝ բուրբ զեղնու-

րակ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՒ՝ կողք բաժնուած, քիչ մը ջուր տեսած, ապա քէ ոչ՝ շատ լաւ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: — ԿԱՉՄ՝ տախտակ, վրան կաշեպատ: — ԳԻՐ՝ նոսր, փոքր: — ԽՈՐԱԳԻՐԻՒ՝ կարմրագիր: — ՉԱՐԳԱԳԻՐԻՒ՝ շատ պարզ բաներ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԻՒ՝ չունի: — ԿԵՍԱՆՈՐԱՆԻՒ՝ չունի, բայց տեղ ձգուած առջեւը: — ԽՈՐԱՆԻՒ՝ չունի: — ՆԿԱՐԻՒ՝ չունի: — ԳԱՏԱՐԿԻՒ՝ չորս բուրբ, երկու սուգեր եւ երկու ետերը: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժը. դար: — ԳՐԻԶ՝ անձանօր: — ՏԵՂԻ՝ անյայտ: — ՏԷՐ՝ անձանօր: — ԿԱՉՄՈՂ՝ անյայտ: — ԿՆԻՒ՝ չունի: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻՒ՝ կը պատկանի Պրն. Հայկ Աճէմեանի ի Թեհերան: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՒ՝ չունի:

Մատենա է՝ Հաւաքածոյ ուր կան.

Թղ. 3ա. «Սրբոյ Հօրն մերոյ Տն. Ներսէսի արքեպ. ի Տարսուսի մեկնութիւն երկրտասան մարդարէկեցն, զոր ի թելադրութենէ Արքայի Նփրեմի եւ Կիւրղի եւ յիւրոց յաւելուածոյ մտաց զեղեցկայարմար յետեալ իրբեւ ոսկի ընդ սարդինն: Բան Տեառն որ եղեւ առ Ովսէէ որդի Յերարայ, յաւուրս Ողիայ եւ Աքազու եւ Նեղեկայ թագաւորաց Յուզայի...: Յար եւ մերձաւոր վկայ են զրոց բնաւորական բնութիւնք մարդկան, որք ցուցանեն զպատուէր օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց»:

Թղ. 42ր. Մեկ. Ամուսայ, Թղ. 59ա. Մեկ. Միքեայ, Թղ. 71ր. Մեկ. Յովկայ, Թղ. 71ր. Մեկ. Յովսանու. Թղ. 86ր. Մեկ. Արդիու, Թղ. 88ր. Մեկ. Նաուսայ, Թղ. 93ր. Մեկ. Ամբակումայ, Թղ. 106ր. Մեկ. Սոփոնեայ, Թղ. 113ա. Մեկ. Անդէսայ, Թղ. 119ա. Մեկ. Չաքարեայ, Թղ. 154ր. Մեկ. Մաղաքեայ:

Թղ. 163ա. Սակս տասն աւետարանական եւ հոգեբաշխ վարդապետութիւնք:

Թղ. 168ա. «Սրբոյն Թէոդոսոսի Անկիւրայ եպիսկոպոսի ասացեալ ի ծնունդ Փրկչին որ ընթերցան ի ժողովն Նփեսոսի: Պայծառս առաջիկայ տօնիս ստորագրութիւն»:

Թղ. 172ր. «Սրբոյն Թէոդորոսի Անկիւրայ եպիսկոպոսի խօսք ի ծնունդն Քրիստոսի, Պայծառ եւ հրաշափառ է մերձեկայ տօնիս խորհուրդ»:

Թղ. 178ա. «Դաւթի փելիսօփայի Ներքինացւոյ Վերլուծութիւն ներածութեան Պորփիրի: Հանդերձեալ հանգերձ Աստուծով սկիզբն առնել, առաջակայ շարագրութեանս, վերջ Թղ. 212ր:

10.

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

ԹՈՒՂԹԻՒՆ՝ 54: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 22.5 X 16: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 15 X 12: — ՏՈՂՔ՝ 18: — ՆԻԻԹ՝ բուրբ, բխագոյն: — ԹԵՐԹԻՒՆ՝ չեն նշանակուած: — ՀԱՆԳԱՄԱՆԻՒ՝ լաւ, քիչ մը վնասուած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: — ԿԱՉՄ՝ յաւաքարտ կաշեպատ պարզ: — ԳԻՐ՝ շեղագիր, տգեղ, դիւրընթեռնի: — ԽՈՐԱԳԻՐԻՒ՝ սեւ: — ՉԱՐԳԱԳԻՐԻՒ՝ խեղճ բաներ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԻՒ՝ չունի: — ԿԵՍԱՆՈՐԱՆԻՒ՝ աննշան բաներ, շատ: — ԽՈՐԱՆԻՒ՝ չունի: — ՆԿԱՐԻՒ՝ բաւական շատ, կա՛մ սեւադեղ կա՛մ գունաւոր, անարժէք: — ԳԱՏԱՐԿԻՒ՝ շատ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժԹ. դար: — ԳՐԻԶ՝ անյայտ: — ՏԵՂԻ՝ անձանօր: — ՍՏԱՅՈՂ՝ անյայտ: — ԿԱՉՄՈՂ՝ անձանօր: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՒ՝ չունի: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻՒ՝ Թեհերան, Պր. Հայկ Աճէմեանի մատենադարանին մէջ:

Մատենա է՝ Տաղարան Ղազար վարդապետի: Թղ. 7ա. «Նորին Տեառն Ղազարու վարժապետ վարդապետի ասացեալ ի վերայ խաչին եւ կարմիր վարդին: Գլ. Առաջնորդ. Ի զալ զարնան եւ քեզ կարօտ մնացի, արագ էլիալ ի գլուխ լերանց մնացի. «Ի Ղազար վարդապետէ»:

Թղ. 11ա. «Նորին Տեառն Ղազարու վարժապետ վարժապետի ի վերայ սուրբ Աստուածածնի ասացեալ: Գլ. Բ. Ի յանեղէն յուսոյն ընտրեալ հարսն երկրի, զարդարեցար շնորհօք կոյսդ զովելիք», «Ի Ղազար վարդապետէ»:

Թղ. 14ա. «Նորին... ի վերայ Բարեկացի մահաւոր Մանուէլի: Գր. Գ. Ի խթեմանէ խզիս խարեալ խոցոտիմ. «Ի Բարեկացի Մանուէլին»:

Թղ. 17ա. «Նորին... բարաձորար ի բերանոյ նախահօրն. Սա տենջալին զբախան եղեմ: Գլ. Գ. Եսացի նոր մանուկս ի սէր քո. այրիմ սրտակէզ բորբոքմամբ եւ վառեալ մաշիմ», «Եսացի է երգ»:

Թղ. 19ա. «Նորին... վասն Առաքելին ետգերին: Գլ. Է. Ես ետգեար նոր մանուկս ի սէր քո այրիմ, սրտակէզ բորբոքմամբ խիստ վառեալ մաշիմ»: — «Ետգեար»:

Թղ. 20ա. «Նորին... ի վերայ աշակերտի իւրոյ Մանուէլեան Գրիգորին: Գլ. Զ. Գոչեմ ձայնիւ արտասուական երգս յօրինեալ ինձ յալական — Գրիգորի է երգս»:

Թղ. 23ա. «Նորին... յօրինեալ տաղ սիրոյ ի վերայ զրոց անուան Յարութիւն ա-

Ֆիցար Համբարձումեանի»: Գլ. Է. «Յարեալ Յիսուս նոր փեսայն, ով մանկունք, պճնեալ զգեցոյց զմեր հարսունք». «Յարութիւն»:

Թղ. 24ա. «Նորին... տաղ վասն զալըստեան բարեկամաց ի ճաշ բերկրութեան: Գլ. Ը. Հրաւէր սիրոյ հոգւոյն կոչման աննիւթս ձայնիւ ազգեցութեան»:

Թղ. 25ա. «Նորին... տաղ ի գալուստ փեսային վասն Գրիգորին: Գլ. Թ. Գարունն էանց ծաղկունքն ամեն չորացան չորացան». «Գրիգորի»:

Թղ. 27ա. «Ի նորին... ասացեալ ի վերայ Ալէքսեանի: Գլ. Ժ. Արփի անաղօտ ճաճանն լուսահեղ, զարդարեալ զհոգիս ի նորասքանչ զեղ.». «Ալէքսեանի է»:

Թղ. 29ա. «Նորին... տաղ սիրոյ վասն Համբարձումեան Հարութիւնի: Գլ. ԺԱ. Յարքայն անհուն սէր լոյս փառաց, բորբոքեցաւ մեզ ի բարձանց». «Յարութիւն»:

Թղ. 31ա. «Նորին... տաղ ի վերայ սրբոյն Յովհաննու Մկրտչին եւ Կարապետին վասն Մանուէլեան Կարապետին: Գլ. ԺԲ. Կառք ոսկեղէն յօրինեցայ, բարձր Մատեայ հորովեցայ». «Կարապետ»:

Թղ. 33ա. «Ի նորին... տաղս հարս եւ փեսայի, վասն Սիմէօն մանկանն: Գլ. ԺԳ. «Սեաւ եմ ես զեղեցիկ նազելիք». «Սիմէօնի է երգս»:

Թղ. 35ա. «Նորին... երգս այս ասացեալ ի վերայ Աղալար խանին: Գլ. ԺԵ. Այսօր է նոր օր եւ տօն ցնծութեան յԱստուծոյ շնորհեալ, ազգին արամեանն»: — «Առ Աղալար խան»:

Թղ. 37ր. «Նորին... ասացեալ զրով անուամբ Մելքոնեան Դանիէլի: Գլ. ԺԶ. Դամբարան հրաշից զատակնիք հոգւոյ, զատնազանն հնչմամբ բացէք դասք երգոց». «Դանիէլ»:

Թղ. 39ա. «Նորին... ի վերայ զրոց անուան Եուսուֆէկեանի Մկրտչին: Գր. ԺԷ. Մաքրագոյն արփոյն, վատեալ արուսեակ». «Մկրտիչ»:

Թղ. 40ա. «Նորին... զրով անուան Առաքելեան Չաքարիայ մանկանն: Գլ. ԺԸ. Չուարթունք երկնից, դուք յիս հայեցէք». «Չաքարիայ»:

Թղ. 42ա. «Ի նորին... զրով Մովսէս մանկանն: Գլ. ԺԹ. Ի բորբոքել անտաստ սիրոյս սխրանաց». «Ի Մովսէսն»:

